

Մ. ՅՈՒ. ԼԵՐՄՈՆՏՈՎԻ «ՂԱՍԱԼԻՔԸ» ՊՈԵՄԸ
ԱՐԵՎԱՏԱՅԱՅԱՅԵՐԵՆ

Մ. Լերմոնտովի բանաստեղծությունների և պոեմների թարգմանությունները արևմտահայ պարբերականներում սկսեցին տպագրվել 19-րդ դարի 80-ական թվականներից: Մի ժամանակաշրջան, երբ համիդյան ժանր ճնշումներից հոգնած արևմտահայ մտավորականությունն իր հայացքը շրջեց դեպի Ռուսաստան: Եվրոպայից օգնություն սպասող, եվրոպական, հատկապես ֆրանսիական մշակույթով կրթվող արևմտահայությունն աստիճանաբար փոխում էր իր քաղաքական կողմնորոշումը: «Մասյաց աղավնի», «Մասիս», «Արևելք», «Հայրենիք», «Քաղմավեպ», «Արևելյան մամուլ» և արևմտահայ այլ պարբերականներ տպագրում էին հոդվածներ, ակնարկներ, հաղորդումներ, գրախոսություններ, թարգմանություններ Ռուսաստանի, ռուսական մշակույթի, ռուս նշանավոր գրողների և նրանց ստեղծագործությունների մասին¹: Ինչպես գրում է գրականագետ Գ. Ստեփանյանը «Այդ հետաքրքրությունը չի եղել մի պատահական բան, այլ գրական մի ամբողջ հոսանքի ձևակերպված ու հաստատուն համոզմունքի, գաղափարական ծրագրի արտահայտություն, մի հոսանքի, որը արևմտահայ նոր գրականության՝ 80-ական թվականների ղեկիստական արձակի հիմք է դրել: 19-րդ դարի կեսերից սկսած արևմտահայերը հատուկ սեր և համակրանք են ցուցաբերել դեպի ռուսական գրականությունը: Այդ արտահայտվել է ամենից առաջ այն բազմաթիվ թարգմանություններով, որ կատարել են մի շարք գրողներ ռուս գրականությունից»²:

Մ. Լերմոնտովի բոցաշունչ բանաստեղծությունները, ազգային ազատագրական, ազատասիրական գաղափարները, անհաշտ վերաբերմունքը տիրող կարգերի և իրականության հանդեպ համահունչ էին արևմտահայության տրամադրություններին և ձգտումներին: Պայմանականորեն կարելի է առանձնացնել երկու շրջան, երբ առավել մեծ է եղել Լերմոնտովի և նրա պոեզիայի հանդեպ հետաքրքրությունը: Դա 1881-1891 և 1901-1910 թվականներն էին: Հայ մշակույթի այնպիսի ճանաչված գործիչներ, ինչպիսիք էին գրականագետ, հրապարակախոս, «Մասիս», «Հայրենիք», «Արևելք» թերթերի խմբագիր Արփիար Արփիարյանը, նշանավոր գրող, դրամատուրգ և հրապարակախոս, «Հայրենիք» թերթի թղթակից Լևոն Շանթը, ռուս պոեզիայի թարգմանիչ, հասարակական գործիչ և բարերար Հովհաննես Պալյանը, Վենետիկի Մուրադ

¹ Տես «Մասիս», 1881, NN 2863, 2864, 2865, «Արևելք», 1884, NN 102, էջ 126-128, 136-137, 139-140, 141-142, 147, 149, 157-159, 161-162:

² Սովետական գրականություն, 1947, N 10-12, էջ 102:

Ռաֆայելյան վարժարանի սան, գրական-հասարակական գործիչ, մանկավարժ և թարգմանիչ, «Բազմավեպ» ամսագրի երկարամյա թղթակից Հայր Զեքովբե վարդապետ Քուլշներյանը իրենց հողվածներով, թարգմանություններով, գրական-հասարակական գործունեությամբ հնարավորություն տվեցին արևմտահայ ընթերցողին ծանոթանալու Ս. Լերմոնտովի բանաստեղծական կերպարին, նրա պոեզիայի հրաշալի մոուլշներին³:

Ուս դասական գրողներին (Ս. Պուշկին, Ս. Լերմոնտով, Ի. Տուրգենև, Ֆ. Դոստոևսկի, Ն. Գոգոլ) նվիրված Ա. Արփիարյանի հողվածների, հողված-ականքների, հողված-վերլուծությունների և գրախոսականների շարքում, որոնք տպագրվել են նրա խմբագրած պարբերականներում, իր ուրույն տեղն ունեն մահ Ս. Լերմոնտովի և նրա «Դասալիքը» ("Серая") պոեմի թարգմանության մասին տպագրված հողվածները⁴: Պոեմի տպագրությունից հետո այնքան մեծ էր ընթերցողների հետաքրքրությունը ռուս բանաստեղծի անձի, նրա ստեղծագործությունների հանդեպ, որ Արփիարյանն անմիջապես հաջորդ համարում Լերմոնտովի մասին հողված տպագրեց: «Հարուն ցնցեց շատ սրտեր,- գրում է Ա. Արփիարյանը,- յամենուր տեղեկություններ կ'ուզեն Լերմոնտովին վերաբերեալ: Այդ հետաքրքրութեանց կատարեալ գոհացում տալ մեզ դժուար է, սակայն կ'հաղորդենք ինչ-որ գիտենք, օգտելով օտարագրի մատենագիրներեն, մանավանդ Գր. Նիկողոսեանէ, որոք ներշնչման կը պարտինք «Դասալիքի» թարգմանությունը»⁵:

Արփիարյանի հողվածը ընդհանուր առմամբ նվիրված է Լերմոնտովի կենսագրությանը, նրա առանձին ստեղծագործություններին, որոնց վերլուծությունը բխում էր նրա քաղաքական դիրքորոշումից, Կովկասին և կովկասյան կոիվների վերաբերյալ նրա վերաբերմունքից: Կարծում ենք, հատկապես ուշադրության արժանի են հողվածի այն հատվածները, որտեղ, օրինակ, մախտում է բանաստեղծի աքսորի, «Պոետի մահը» բանաստեղծության մասին: Եվ չնայած, որոշ անճշտությունների, որոնք վերաբերում են Լերմոնտովի աքսորի տարիներին (Արփիարյանը մույնացնում է առաջին և երկրորդ աքսորները), մա անդրադարձել է պոետի և ժողովրդի կապին, հավատացած է, որ իրոք, գալու է ահեղ դատաստանի օրը և պատժվելու են մարդասպանները:

³ Լևոն Շանթի, Հովհաննես Պալյանի, Զեքովբե վարդապետ Քուլշներյանի գրական-թարգմանական գործունեության մասին մանրամասն տես Ռ. Տեր-Գրիգորյան, Լևոն Շանթը ռուս պոեզիայի թարգմանիչ, Բանբեր Երևանի համալսարանի, N 1 (118), 2006, էջ 148-160; Ռ. Տեր-Գրիգորյան, Հովհաննես Պալյան. բանաստեղծը և թարգմանիչը, Բանբեր Երևանի համալսարանի (հասարակական գիտություններ), N 1(115), Ե., 2005, էջ 136-144; Ռ. Տեր-Գրիգորյան, Մխիթարեան միաբանութեան արժանի զաւակը (Հ. Զեքովբե Քուլշներեանի մասին), «Բազմավեպ», N 1-4, 2005, էջ 394-411:

⁴ Ս. Արփիարյան, «Դասալիքը» պոեմի թարգմանության մասին, «Մասիս», 1887, N 3875, էջ 166, Ս. Արփիարյան, Մխիթար Լերմոնտով, «Մասիս», 1887, NN 3875, 3876, էջ 177-178:

⁵ «Մասիս», 1887, N 3875, էջ 177:

Միաժամանակ նա ճիշտ է մեկնաբանել պարտի պատճառները, ընդգծելով, որ «նրան քաղաքացին համոզուցն և խրոխտ բնավորության համար»:

Արփիարյանը գրում է կովկասյան ժողովուրդների պայքարի, այն հակասական զգացմունքների մասին, որոնք ուներ բանաստեղծ-սպան Կովկասում իր զինվորական պարտականությունները կատարելիս. «Իբր ոռւս սպայ Լերմոնդով պարտական էր մարտնչիլ ընդդէմ թշնամւոյն, բայց բանաստեղծը կը մոռնայ հայրենիքն ալ. կը մոռնայ քաղաքականութիւնն ալ, զմայլած ի տես այն քաջերու, որք չէին եւրոպական ասպետներ, այլ վայրենի դիւցազունք, կը մեռնէին իրենց լեռներու, իրենց իրաւանց ի պաշտպանութիւն»:

Ընդունելով Ռուսաստանը, ռուսական մշակույթը և նրա քաղաքական դերը Կովկասում՝ Արփիարյանը, այնուամենայնիվ, ռուսների կռիվը լեռնցիների դեմ համարում է անարդացի. «Անիրավ են նոքա, որ կուզան Կովկաս ընկճելու իրենց լուծին ներքե... Ոչ ապաքէն յանյիշատակ ժամանակաց լեռնականցն են լեռն ու հեղեղատն»: Նույն հոդվածում վերլուծելով Լերմոնտովի «Կազակական օրոր», «Վալերիք» բանաստեղծությունները՝ Արփիարյանը ներկայացնում է կազակ մոր ծանր ապրումները, համոզված է, որ ռուս կազակը վերադառնալով և հիշելով արյունալի տեսարանները, ինքը ևս պետք է ատի պատերազմը:

Յոդվածաշարում բարձրացվում են հարցեր, որոնք այսօր էլ շարունակում են մնալ արդիական կովկասյան ժողովուրդների համար: Ազատության, անկախության մասին տրվում են գնահատականներ, որոնք համահունչ էին թուրքական լծի տակ տառապող և իրենց ազգային ինքնությունը պահպանել ձգտող արևմտահայությանը: Գաղափարական այսպիսի դիրքորոշում ունեցող «Սասիս», իսկ ավելի ուշ «Հայրենիք» թերթերի խմբագիր Ա. Արփիարյանը, անշուշտ, պետք է ջանար թարգմանված տեսնել անհատի և հայրենիքի ազատության համար պայքարի կոչող Լերմոնտովի երկու պոեմները՝ «Ղասալիքը» («Սասիս», 1880) և «Մծիրի» («Հայրենիք», 1891)⁶:

Լերմոնտովի «Ղասալիքը» պոեմի արևմտահայերեն թարգմանությունն ունի իր նախապատմությունը, որը մանրամասնորեն ներկայացնում է Ա. Արփիարյանը թարգմանությանը կից առաջաբանում. «Որքա՛ն գիշերներ Պ. Նիկողոսեանի հետ միայնակ նստած (Նիկողոսյանը կովել էր ռուսական բանակում և Կ. Պոլսում «Մշակի» պաշտոնական թղթակիցն էր – Ռ.Տ.-Գ.) խօսացած ենք Կովկասու դիցազնութեանց վրայ, և միշտ Լերմոնդովին անունն հիացմամբ կ'արտասանէր նա: Օրմն ալ ըսաւ, թե արդեն ֆրանսերէնի թարգմանել տուած է, այսինքն իմաստներն, և Աղեքսանդր էֆենտի Փանոսեանին տուած է ֆրանսերէնն, որպեսզի վերածի տաղաչափութեան»⁷: Արփիարյանը

⁶ «Մծիրի» պոեմի արևմտահայերեն թարգմանության մասին մանրամասն տես Ռ. Տեր-Գրիգորյան, Բանբեր Երևանի պետական համալսարանի, 2006, էջ 150-159:

⁷ «Սասիս», 1887, N 3875, էջ 144:

գտնում է Ա. Փանոսյանին և խնդրում, որպեսզի ֆրանսերենից առաջ նախ վերածի հայերենի՝ «Մասիսում» տպագրելու համար: Անհասկանալի է մնում, արդյոք Փանոսյանը ֆրանսիական տեքստից է հայերեն թարգմանել, թե՞ խնդրել է Նիկողոսյանին իր համար հայերեն տողացի թարգմանել: Սակայն արևմտահայերեն թարգմանությունն արվել է մի քանի օրվա ընթացքում և ինչպես գրում է Արփիարյանը. «... Երբ կարդացի Փանոսյանի թարգմանութիւնն, Լերմոնդովը գտա, թարգմանված ամեն մէկ բառ, ամեն մէկ տող կը մտրակէ մեր արիւնն»: Հատկանշական է նաև այն, որ Արփիարյանը վերջում ցանկություն է հայտնում, որպեսզի Լերմոնտովի ստեղծագործությունները և մասնավորապես «Ղասալիքը» թարգմանված տեսնի թուրքերեն. «Կը փափագիմք, որ թուրք գրագէտներ «Ղասալիքը» թարգմանեն հայերէնէ թուրքերէնի և անտարակոյս ամենաջերմ համակրանաց պիտի արժանանայ թուրք ժողովրդի կողմանէ»⁸:

Ինչով են գրավում Լերմոնտովի կովկասյան պոեմները, ինչո՞ւ բոլոր ժամանակներում դրանք մնում են արդիական, կարևոր ու գրավիչ: Հավանաբար մարդու համար չափազանց եական մի զգացմունքի՝ մարդու հոգևոր և ֆիզիկական ազատության գաղափարի համար: Իրավացի էր Լև Տոլստոյը, երբ Կովկասում ծառայելուց հետո, 1854թ. իր օրագրում գրեց. «Ես սկսում եմ սիրել Կովկասը, չնայած ուշացած, բայց ուժեղ սիրով: Իսկապես սքանչելի է այդ երկիրը, որտեղ այդքան զարմանալիորեն և բանաստեղծորեն միավորվում են երկու հակադիր երևույթներ՝ պատերազմը և ազատությունը»⁹:

«Ղասալիքը» պոեմը Լերմոնտովը հավանաբար գրել է առաջին աքսորից վերադառնալուց հետո՝ 1838թ.: Առաջին անգամ մի քանի կրճատումներով լույս է տեսել 1846թ., «Երեկ և այսօր» գրական ժողովածուում: Պ. Ա. Վոխսկովատովը, հիմնվելով Ա. Պ. Շան-Պիերիի ասածների վրա, վկայում է, որ պոեմը գրված է եղել «1838 թվականից ոչ ուշ»: Երգի կամ լեզենդի միանման սյուժե Լերմոնտովը լսել է Կովկասում: Ճանապարհորդ Տետրու դը Մարինյիի «Ճանապարհորդություն Չերքեզիայում» (Քրյուսել, 1821) գրքում հիշատակվում է չերքեզական մի երգ: Այն մի պատանու մասին է, որին ցանկացել են արտաքսել իր երկրից, որովհետև նա ռուսների դեմ կազմակերպված արշավանքից հետո վերադարձել է միայնակ, իսկ բոլոր ընկերները զոհվել են: Իսկ «Լուսինը լուզում է...» երգը որոշ փոփոխություններով տեղափոխված է այս պոեմի մեջ «Իզմայիլ բեյից»¹⁰:

Լերմոնտովի երկու ուղղումները ևս վկայում են պոեմի հայրենասիրական բովանդակության մասին: Այսպես «Любви будь вернее» տողը բանաստեղծը վերափոխել է «Будь славе вернее», իսկ «Любви изменившам»—ն՝

⁸ Նույն տեղում:

⁹ Л. Н. Толстой, Дневник за 1854 год "Л. Н. Толстой о литературе", М., 1955, стр. 23.

¹⁰ С. А. Андреев Кривач Лермонтов. Вопросы творчества и биографии, М., 1954, стр. 84.

“СВОЕМ УЗМЕНУШАМ”: Սիրային երկն, ըստ էության, դարձել է հայրենասիրական: Շարունակելով նախորդ պոեմների՝ «Կալլա», «Հաջի Արրեկ», «Իզմայիլ բեյ», «Սուլ Բաստունչի» թեմատիկան, Լերմոնտովը ցույց է տալիս Արևելքի խնդիրների հանդեպ իր հետաքրքրությունը: Նա ձգտում էր միավորել մարդու ազատության, պատմության մեջ մարդու դերի, մարդու ճակատագրում անմահության գաղափարի արևմտաեվրոպական և արևելյան մեկնաբանությունները: «Դասալիքը» պոեմում այս հարցերը ևս բարձրագույն են խությամբ, բազմակողմանիորեն: Փառքի, պատվի, հայրենիքի, ազատության և, իհարկե, անմահության լերմոնտովյան հարցադրումներն ու պատասխանները արևմտահայերեն հնչում են նույնքան ուժգին, ոճական ու գաղափարական առումով բնագրին համարժեք: Արփիարյանն անդրադառնալով պոեմի տաղաչափական համարժեքությանը գրում է. «... ահա թե ինչպես աշխարհիկ լեզվով դյուցազներգութիւն մը կրնա թարգմանիլ և Միխայիլեան քաջ տաղաչափներն իրավունք ունին յարգելու մեր երիտասարդ բանաստեղծը, միայն այդ թարգմանութիւնն իսկ կբավէ Փանոսեան բանաստեղծ համարել»¹¹: Ա. Փանոսյանի թարգմանությունը ուշադրության է արժանի ոչ միայն որպես զրական-պատմական փաստ, այլև հնարավորություն է տալիս վերլուծել և բացահայտել թարգմանության տեսական և գործնական մի շարք հետաքրքիր սկզբունքներ, որոնք նա օգտագործել է և որոնք այսօր էլ արդիական են: Այսպես, գրեթե անփոփոխ են մնացել պոեմի կառուցվածքը, տողերի քանակը. բնագրում այն բաղկացած է 151 տողից, թարգմանության մեջ՝ 149՝ ներառյալ նաև երգը: Փոխվել է նաև տաղաչափությունը: Ի տարբերություն Լևոն Շանթի, որը գրեթե պահպանել էր «Սծիրի» պոեմի չափը, Փանոսյանն ընդհակառակը՝ ավելացրել է տողաչափը, բնագրի 8-9 հանգ ունեցող տողը արևմտահայերենում դարձրել է՝ 11-12: Հանգավորված են բնագրի 1-3 և 2-4 տողերը, մինչդեռ թարգմանության մեջ հանգավորումը խառն է՝ 1- 4/ 2- 3, 1- 3/ 2- 4, 1- 2/ 3- 4: Պոեմը գրված է ոճական տարբեր հարթություններում. պատմողական՝ հեղինակի և հերոսի խոսքը, երկխոսություն՝ Սելիմի և Հարունի, մոր և Հարունի միջև:

Հեղինակային պատումով է սկսվում պոեմը. առաջին երեք քառատողում Հարունի փախուստի, նրա դավաճանության պատմությունն է: Այն սկսվում է միանգամից հանգույցից, հեղինակի խոսքը դիպուկ է, բարձրաճ, զորեղ, ազդեցիկ: Ներքին ռիթմը թարգմանության մեջ պահպանված է, հեղինակի խոսքում նկատվող հնչերանգային փոփոխությունները 1, 2, 3-րդ տներում տարբեր են, որոնք ավելի մեղմ հնչերանգով երանգավորում են ստանում հաջորդ վեց տողերում՝ գիշերային տեսարանում, երբ ավարտվում է օրը և ամեն ինչ թաղվում սպիտակ շղարշի մեջ.

¹¹ «Մասիս», 1887, N 3875, էջ 144:

Гарун бежал быстрее лани,
Быстрее, чем заяц от орла;
Бежал он в страхе с поля брани
Где кровь черкесская текла...

Թարգմանված է.

Այծեման պէս սարսափահար փախաւ Յարուն,
Ձերդ նապաստակ արծուին առջեւ ելած արտեմ,
Խոյս տըլաւ նա պատերազմի ահ'դ դաշտէն
Ուր հեղեղի պէս հոսած էր Չերքէզ արիւն...

Ինչպէս պարզ երևում է թարգմանությունը բառացի չէ, այն հնարավորություն է տվել թարգմանչին, պահպանելով իմաստային և բառապատկերային հիմնական համակարգը, ավելի ազատ վերաբերվել բնագրին: Օրինակ, բառային այնպիսի հավելումներ, ինչպիսիք են *սարսափահար, հեղեղի պէս, որք մահացան, զենքեր* լրացնելով բանաստեղծական պատկերները, չեն խախտում բնագրի բառիմաստային կամ պատկերային համակարգը:

Պոեմի արևմտահայերեն թարգմանության մեջ Փանոսյանը կարողացել է առանձին բառերի (իրողությունների) պահպանման միջոցով վերստեղծել կոլկասյան մահմեդական բներանգը: Այսպես, օրինակ, *аллах, сакля, джугум, гяур, Коран, аыл* և այլն: Երբեմն դրանց շրջանցումը կարող է հանգեցնել իմաստային կամ պատկերային լական կորստի: Պոեմում այդպիսի նշանակություն ունի *аллах* (ալլահ) բառը, որը թարգմանվել է *աստված*, սակայն կարծում ենք այն պետք էր նույնությամբ թողնել: Կամ *аыл*-ը, որը գյուղ է նշանակում, փոխարինվել է *յարկ* բառով: Մինչդեռ Յարուն վերադառնում էր հայրենի գյուղ. նա ժայռերի արանքում տեսել էր հայրենի աուլը:


Պոեմում կան նաև իմաստային որոշակի ծանրաբեռնվածություն կրող բառեր և արտահայտություններ, որոնց ճշգրիտ վերստեղծումը, թարգմանչի կողմից դրանց արժեվորումը կօգնի թարգմանության մեջ պոեմի հիմնական գաղափարական, իմաստային կամ բովանդակային համարժեքության պահպանմանը: Այդպիսիք են *честь, вольность, беглец свободы, мрус, раб, душа, позор* և *губель, слава* բառերը և արտահայտությունները: Արևմտահայերեն թարգմանության մեջ հիմնականում արժեվորված են դարձ, յուրահատուկ շեշտվածություն են ստանում՝ ընդգծելով պատմական իրադրության, հեղինակային դիրքորոշման և պոեմի գաղափարական ուղղվածությունը: Սակայն, երբեմն Փանոսյանը որոշ անճշտություններ է թույլ տվել, որոնք, բնականաբար, թուլացրել են արևմտահայերեն թարգմանությունը: Այսպես.

Отец и два родные брата

За честь и вольность там легли...

Երկտողը արևմտահայերեն թարգմանվել է՝

Իւր հայրն եւ իւր երկու եղբարքն անդ գոհ եղան



Անկախութեան-ազատութեան վրտն դատին...

Ինչպես տեսնում ենք սօսոն (պատիվ) քառը թարգմանվել է *անկախություն*, որը այնքան էլ ճիշտ չէ, քանզի երկու կարևոր զաղափարների համար են զոհվել Հարունի հայրն ու եղբայրները՝ *պատվի և ազատության*, քանզի կովկասցու համար պատիվը:

Ծանր են հնչում Հարունին ուղղված մոր խոսքերը, երբ իմանում է, որ նա դասիք է, փախել է մարդտի դաշտից.

“Молчу, молчу! гаур лукавыи,
Ты умереть не мог со славой...
Твоим стыдом, беглец свободы,
Не омрачу я стары годы...
Ты раб и мрсы и мне не сын!...”.

Եթե առաջին երկտողում Փանոսյանը կարողացել է վերստեղծել հնչերանգային նրբերանգները, բառիմաստային խորությունները և անգամ լրացուցիչ բառերը (գարշելի, չար) ավելի ընդգրկուն և դիպուկ են դարձնում մոր խոսքերը՝

«Բաւ է ալ, բաւ, լռո՛ւ , *կեալուր, գարշելի, չար*
Որ չը գիտցար քաջորդւոյն պէս մեռնիլ *փառք...*»:

ապա հաջորդ տողերում, շրջանցելով չափազանց կարևոր մի արտահայտություն՝ “беглец свободы”, կարծում ենք իմաստային առումով թուլացրել է թարգմանությունը.

«Մի աղտեղեր խոնջեալ կենացս աւուրքն յետին.

Վատ մ'ես դու պիղծ, եւ չես բընաւ դու իմ որդին»:

Այս համատեքստում իմաստային որոշակի նշանակություն ունեն նաև “*мрсы և раб*” մակդիրները, որոնք արևմտահայերենում կորցրել են իրենց համարժեքությունը՝ *վատ և պիղծ*:

Մ. Լերմոնտովի պոեմի բառապատկերային համակարգում թերևս արժե ուշադրություն դարձնել կրկնվող բառերի վրա, որոնք ոչ միայն առանցքային նշանակություն ունեն տվյալ համատեքստում, այլև ընթերցողի մոտ պատկերային-հոգեբանական, երբեմն նաև գունապատկերային նշանակություն են ստանում: Այդպիսի դեր ունի *արյուն* բառը (9 անգամ), որը օգտագործվում է բառային տարբեր համակցումներում: Թարգմանիչը ոչ միայն դրանք լիովին պահպանել է, այլև ձգտել բանաստեղծական խոսքն ավելի արտահայտիչ և պատկերային դարձնել: Այսպես, օրինակ, *кровь черкесская, окровавленные ноши, кровь и пот, крововая битва, крововая измена, кровь дощца* և այլն, որոնք համապատասխանաբար թարգմանվել են՝ *չերքեզ արիւն, արիւնն անոնց, քիտոն արիւնախառն, ոտիւք արիւնահոս, վերքն հոսող արիւն*: Որոշ դեպքերում *արյուն* բառը օգտագործվել է ուրիշ բառի հետ, սակայն պահպանվել է բնագրի արտահայտչականությունը: Փանոսյանը թարգմանության մեջ

հմտորեն օգտագործում է բառի հոմանիշային տարբերակները, որոնք նպաստում են խոսքի պատկերավորությանը. пламенные осы – հուր աչեր, огонь надежды – յուսոյ բոցով, жарким солнцем – բոցավառ յամբույր և այլն:

«Դասալիքը» պոեմում որոշակի տրամադրություն են ստեղծում հակադրության հիման վրա կառուցված պատկերային բառերը՝ գիշերառավոտ, խավար-լուսին, մութ-լույս և այլն, որոնք բնութագրում են հերոսի՝ Հարունի հոգեվիճակը: Փանոսյանի թարգմանության մեջ դրանք հիմնականում ճշգրտորեն պահպանված են.

Պատուհանին առջեւ, ի գուր, անդ ի մըթան,
Մրմունջք, հառաչք, հայցուածք, ուղբք եւ անծոք...
Որոց՝ ընդ իւր ամօթալից կենաց թըշուառ,

Սի դաշոյնի ուժգին հարուած վերջ տայ իսպառ...
-Առաւօտուն, մայրն՝ երբ տեսնէ զայն անկենդան՝
Գլուխն ի միւս կողմ կը դարձունէ, ցուրտ, անտարբեր.

Թարգմանական տեսակետից ինքնատիպ լուծումներ է տվել Փանոսյանը աղջկա երգին, որը պոեմի ամենաքնարական և ամենահերոսական հատվածներից մեկն է: Նախերգ հիշեցնող քառատողը, որը բնագրում կրկնվում է նաև երգի վերջում, թարգմնիչը փոխարինել է ուրիշ քառատողով՝ ազատ վարվելով տեքստի հետ.

Месяц плывет,	Լուսնակին դեմքն երեւի
Тих и спокоен	Լըռին եւ հանդարտ,
А юноша воин	Մարտիկն արի, կորովի,
На бумбу идет.	Կը դիմէ ի մարտ:

Փանոսյանը երգի վերջում ավելացրել է ևս մեկ քառատող.

«Մեր այն լերանց բոլոր կոյսեր
Պիտի մերժեն, ատող սրտիւ
Անամօթն այն և անպատիւ,
Եւ նախատի՛նք սեպեն գիւր սեր»:

Սիաժամանակ հարկ է նշել, որ թարգմանության մեջ պահպանվել են չափային, ռիթմային, ոճական գրեթե բոլոր նրբերանգները:

Խոսքի պատկերավորման միջոցները՝ մակդիրներ, համեմատություններ, փոխաբերություններ, դարձվածքներ, ևս եղել են թարգմանչի ուշադրության կենտրոնում. յուրաքանչյուր առանձին դեպքում նա գտել է տվյալ համատեքստին հարմար տարբերակ:

Օրինակ՝ Гарун бежал быстрее лани,
Быстрее, чем заяц от орла.

համեմատությունը թարգմանվել է.

Այծեման պէս սարսափահար փախաւ Հարուն,
Ջերդ նապաստակ արծուին առջեւ ելած ատէն:

Ինչպես տեսնում ենք համեմատության երկու մասն էլ թե ձևով և թե բովանդակությամբ համապատասխանում են բնագրին:

Կամ՝

И скрылся я один в пустыне,

Как зверь, преследуем, гоним.

Թարգմ.՝ Հալածական, վանեալ իբրեւ գազան վայրի,

Անապատին մէջ փախչելով ես հոս եկայ:

Թարգմանական տեսակետից հաջողված են մաս երկխոսությունները՝ հարց ու պատասխանները, որոնց շնորհիվ հեղինակը կարողացել է բնութագրական և խոսու ղարծնել կերպարները: Արևմտահայերեն թարգմանության մեջ, օրինակ, իսկապես ուրվագծվում է մոր սգավոր, վշտահար, միաժամանակ վեհ ու անգիշում կերպարը: Կարծում ենք, համարժեքության թարգմանիչը կարողացել է հասնել միշտ հնչերանգի, տոնայնության, բառային համակցումների շնորհիվ: Մաժորային են հնչում մոր խոսքերը (հարցերը), մինորային՝ որդու պատասխանները:

"А где отец и братья?" "Папу!"

Пророк их смерть благословил,

И ангелы их души взяли".

"Ты отомостил?" "Не отомостил..."

Թարգմանված է՝

- Հայրդ եւ եղբարքդ ո՞ւր մընացին...

- Մեռան...»:

- Օրինէ՛ թող Մարգարեն ըզմահ նոցին,

Եւ անոնց վեհ հոգիքն հանգչին թող լուսածիր

- Հրեշտակաց գիրկն... Անոնց վրեժն դու լուծեցի՞ր...»

Պոեմում հոգեբանական որոշակի ժանրաբեռնվածություն են կրում մահ բնապատկերները, որոնք որոշակի տրամադրություն են ստեղծում: Կովկասյան բնությունը ներկայացված է իր ինքնատիպ գեղեցկությամբ, յուրահատուկ գունային և լուսային ներկայանակով, ձմեռային բնապատկերներով (մշուշ, ցուրտ, քամի, սպիտակ ձյուն):

Այսպիսով, «Մասիս» թերթում Ա. Արփիարյանի նախաձեռնությամբ տպագրված «Դասիլքը» պոեմը (1887), պատահական թարգմանություն չէր, այլ պատմական անհրաժեշտություն՝ թելադրված ժամանակի պահանջով, արևմտահայության գրական հետաքրքրություններով: Փանոսյանի թարգմանությունը մոր և չուսումնասիրված փաստերով է հասրտացնում ինչպես հայ-ռուսական գրական առնչությունների, այնպես էլ գեղարվեստական թարգմանության պատմությունը: